ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«06» հունիսի 2019թ. No 1508-Ա

10 JUN 2019

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 28 փետրվարի 2019 թվականի N 162-Ն որոշումը, Կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշումը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0103092919 առ 31.05.2019թ. գրությունը և դեղի պարզ ընթացակարգով կատարված փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Գրանցել երաշխավորված թվով 3 դեղերը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Լ.Մելիքյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշելով սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

Ընդհանուր և արտաքին կապերի բաժին
5505
№ 10 JUN 2019 ժամ 10.10
Կից ☐ Դեղի կարգավիճակ
Նշումներ

06.06.2019

X

VERIFIED OCSP 06.06.2019 17:00:45 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Ստաց. 07.06.19 ժ. 17⁰⁰

Հավելված

ՀՀ առողջապահության նախարարի

2019 թվականի հունիս « 06 » - ի

թիվ 1508 – Ա հրամանի

## ՊԱՐԶ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ

| Հ/Հ | Գրանցման հայտի ընդունման ամսաթիվ | Առևտրային անվանում | Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | Դեղաձև | Դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում) | Արտադրող ֆիրման | Արտադրող երկիր | Գրանցման հավաստագրի իրավատեր | Բացթողման կարգ | Եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | 20.03.2019 | Կետոնալ | կետոպրոֆեն | լուծույթ ներարկման | 50մգ/մլ; (10) ամպուլներ 2մլ | Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա | Սլովենիա | Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա, Սլովենիա | Դ | 18587 31.05.2019 |
| 2. | 05.02.2019 | Կոֆեին-նատրիումի բենզոատ | կոֆեին (կոֆեին-բենզոատ նատրիում) | լուծույթ ներարկման | 100մգ/մլ; (10) ամպուլներ 1մլ | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6 | Հայաստանի Հանրապետություն | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6, Հայաստանի Հանրապետություն | Դ | 18588 31.05.2019 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | 05.02.19 | Կոֆեին-նատրիումի բենզոատ | կոֆեին (կոֆեին-բենզոատ նատրիում) | լուծույթ ներարկման | 200մգ/մլ; (10) ամպուլներ 1մլ | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6 | Հայաստանի Հանրապետություն | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6, Հայաստանի Հանրապետություն | Դ | 18589 31.05.2019 |